ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Արձանագրություն 1

2019թ. հունվարի 31-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 23-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.2017-2018 ուստարում «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

/զեկ՝. ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյան/

2.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում կառուցվածքային փոփոխություն կատարելու մասին հարցի քննարկում:

/զեկ՝. ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյան/

3.Գավառի պետական համալսարանում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման նոր կարգի նախագծի քննարկում և հաստատում:

/զեկ՝. պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

4.ԳՊՀ բակալավրիատում և մագիստրատուրայում 2018-2019 ուստարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստում:

/զեկ՝. պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

5.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանի զեկուցումը 2017-2018 ուստարում «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ: Զեկուցողի հաշվետվությունն ընդգրկում էր համալսարանի զարգացման բոլոր ուղղությունները, որոնք նախատեսված են ԳՊՀ 2017-2022 թվականների զարգացման ռազմավարական ծրագրում և համահունչ են համալսարանի առաքելությանը: Համալսարանում իրականացվող գործընթացներում նախ և առաջ կարևորվեց կրթական ուղղությունը: Համալսարանի գերխնդիրը վերջնարդյունքահեն որակյալ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է, որի համար սահմանվել են կրթական վերջնարդյունքներ թե՛ ՄԿԾ-ների, թե՛ դասընթացների, թե՛ նույնիսկ յուրաքանչյուր թեմայի համար, վերանայվել են կրթական ծրագրերը, հստակեցվել են

իրազեկությունները, նախատեսվել են ուսուցման, ուսումնառության և գնահատման մեթոդներ և դրանց քարտեզագրում: Համալսարանում մեծ ուշադրություն է դարձվում գիտահետազոտական գործունեությանը: Այդ ուղղությամբ կազմակերպվել է գիտաժողով, հրատարակվել են գիտական հոդվածների ժողովածու, դասախոսների հոդվածներն ու գրքերը: Խրախուսվում են դասախոսների և ուսանողների համատեղ հետազոտական աշխատանքը: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ կրթական միջավայրի արդիականացման, ուսանողների հետ տարվող աշխատանքների կազմակերպման, վարչարարության պատշաճ իրականացման, արտաքին կապերի և համագործակցության խնդիրներին: Առանձին-առանձին ներկայացվեցին նշված ուղղություններով կատարված աշխատանքները, նախանշվեցին հետագա անելիքները: Համալսարանի գործունեության հաշվետվողականությունն ու թափանցիկությունը ապահովված են հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի, ակադեմիական ազնվության հայեցակարգի, էթիկայի և բարեվարքության կանոնների առկայությամբ:

Հիմք ընդունելով հաշվետվությունը՝

ՈՐՈՇԵՑԻՆ.-ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, 2017-2018 ուստարում «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Հ.Ղաջոյանի զեկուցումը ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում կառուցվածքային փոփոխություն կատարելու մասին: Նա ասաց, որ ի հայտ են եկել օբյեկտիվ հանգամանքներ, որոնք ստիպում են իրականացնել կառուցվածքային փոփոխություն: Լրացել է հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Լ.Քուրքչյանի պաշտոնավարման ժամկետը, միաժամանակ նրա տարիքի հետ կապված խնդիր կա: Զեկուցողը, նկատի ունենալով, որ ուսանողների քանակը սահմանափակ է, մյուս կողմից էլ պատմությունը ևս հասարակական գիտություն է, առաջարկեց միավորել հասարակական գիտությունների և պատմության ամբիոնները՝ վերակազմակերպելով մեկ՝ հասարակական գիտությունների ամբիոնի:

Քննարկելով Հ.Ղաջոյանի առաջարկությունը՝

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Հ.Ղաջոյանի առաջարկությունը և միավորել հասարակական գիտությունների և պատմության ամբիոնները, վերակազմակերպել մեկ՝ հասարակական գիտությունների ամբիոն (ամբիոնի վարիչ՝ Հ.Մ.Հարությունյան):

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը Գավառի պետական համալսարանում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման նոր կարգի նախագծի մասին: Նա ասաց, որ ԿԳՆ նախապես առաջարկել է վերանայել այդ կարգը:

ԳՊՀ-ն ունի այդ կանոնակարգը, ուստի նպատակահարմար է ուղղակի վերանայել այն: Այնուհետև ներկայացվեցին կատարված փոփոխությունները: Առաջարկվեց անվավեր համարել 23-րդ կետը:

Նախագծի շուրջ ծավալվեց քննարկում և առաջարկվեց հաստատել այն:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հաստատել «Գավառի պետական համալսարանում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կանոնակարգը (փոփոխություններով)»:

2.Կանոնակարգի 23-րդ կետը համարել անվավեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ բակալավրիատում և մագիստրատուրայում 2018-2019 ուստարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստման մասին: Նա գիտխորհրդի անդամների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ այս ուստարին առանձնանում է նրանով, որ վերացվում են բոլոր բանավոր քննությունները: Բակալավրիատի ավարտական կուրսերի բոլոր ուսանողները ամփոփիչ ատեստավորման ժամանակ պաշտպանելու են իրենց ավարտական աշխատանքները: Ամփոփիչ ատեստավորման այս ձևը տարածվում է նաև հեռակա ուսուցման համակարգի վրա: Մյուս կարևոր իրողությունն այն է, որ որոշակի հանգամանքներից ելնելով՝ ավարտական աշխատանքների թեմաները տրվել են ուշացումով, սակայն դա չպետք է ազդի ավարտական աշխատանքների կատարման որակի վրա: Զեկուցողն այս առումով կարևորեց ավարտական աշխատանքների ղեկավարների դերը, նրանց ակտիվ ու անմիջական աշխատանքը ուսանողների հետ: Մյուս կարևոր նորամուծությունն այն է, որ մագիստրոսական թեզերը պարտադիր պետք է ենթարկվեն արտաքին գրախոսման: Որպեսզի տարվելիք աշխատանքներում թերացումներ չլինեն, անհրաժեշտ է պահպանել մշակված ժամանակացույց- ընթացակարգը, որը շրջաբերականի տեսքով կտրվի դեկանատներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հանձնարարել դեկանատներին, ամբիոններին աշխատանքներ տանել ամփոփիչ ատեստավորման ամբողջ գործընթացը պատշաճ մակարդակով իրականացնելու համար:

2.Հանձնարարել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարներին ակտիվ և արդյունավետ աշխատանքներ տանել՝ ապահովելու ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի որակն ըստ նախատեսված բաղադրիչների:

3.Հանձնարարել ակադեմիական խորհրդատուներին խորհրդատվություն իրականացնել ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր կատարող ուսանողների շրջանում ԳՊՀ համապատասխան կանոնակարգերի վերաբերյալ:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

Արձանագրություն 2

2019թ. մարտի 9-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 22-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության հաշվետվություն:

/զեկ՝. ԲՖ դեկան Թ.Ասոյան/

2. ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության հաշվետվություն:

/զեկ՝. ԲՆՖ դեկան Մ.Ավագյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան Թ.Ասոյանի զեկուցումը 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության մասին: Զեկուցողը նախ ներկայացրեց տեղեկություններ նշված ուսումնական տարում կատարված ընդունելության և ուսանողական համակազմի մասին: Նշվեց, որ ընդունելություն թե՛ բակալավրիատում, թե՛ մագիստրատուրայում կատարվել է երեք մասնագիտությունների գծով՝ հայոց լեզու և գրականություն, անգլերեն լեզու և գրականություն, ռուսաց լեզու և գրականություն: Համեմատություն կատարվեց նախորդ ուսումնական տարիների հետ՝ ցույց տալով ընդունվածների քանակային տարբերությունները: Ուսանողական համակազմի առումով նկատելի է նվազման միտում:

Այնուհետև զեկուցողը ներկայացրեց ձմեռային քննաշրջանի առաջադիմության հետ կապված տվյալներն ըստ բաժինների և կուրսերի: Անդրադարձ կատարվեց նաև ուսանողների շարժին: Ներկայացվեցին տվյալներ ֆակուլտետում վերականգնված, հեռացված, տեղափոխված ուսանողների մասին: Թ.Ասոյանը կարևորեց ուսպլանների, առարկայական ծրագրերի վերանայման, թարմացման գործընթացները՝ պայմանավորված աշխատաշուկայի պահանջներով, ուսանողների կրթական կարիքների բավարարմամբ, ուսուցանվող առարկաների հասարակական բնույթով: Ներկայացվեցին ուսպլաններում կատարված փոփոխությունները: Շատ կարևոր են նաև ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների արդյունավետ

օգտագործումը, պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական և մեթոդական պատրաստվածությունը: Այդ ամենը միասին պայմանավորում են ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

Զեկուցման վերջում զեկուցողն անդրադարձավ 2-րդ կիսամյակում կատարվելիք աշխատանքներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան Թ.Ասոյանի զեկուցումը բանասիրական ֆակուլտետի 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության մասին ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան Մ.Ավագյանի զեկուցումը բնագիտական ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության մասին: Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետում կատարված ընդունելությունը, ուսանողների շարժը, տվյալներ ներկայացրեց ուսանողական համակազմի վերաբերյալ՝ նշելով, որ ընդհանուր առմամբ նկատելի է նվազման միտում, որոշ մասնագիտությունների գծով ընդունելություն չի կատարվում կամ ընդուվողների քանակը շատ քիչ է: Ներկայացվեցին տվյալներ ձմեռային քննաշրջանի առաջադիմության վերաբերյալ, նշվեց, որ քննություններին չմասնակցողները հիմնականում նրանք են, ովքեր խնդիրներ ունեն ուսման վարձերի վճարման հետ:
Այնուհետև զեկուցողն անդրադարձավ ուսումնական պլանների և առարկայական ծրագրերին, որոնք թարմացվել և փոփոխվել են ուսումնական տարվա սկզբին: Կիսամյակի ընթացքում իրականացվել են տարբեր միջոցառումներ, ուսանողական գիտաժողովներ: Ուսումնական գործընթացը ֆակուլտետում կազմակերպվել և իրականացվել է արդյունավետորեն:

Մ.Ավագյանը ներկայացրեց նաև 2-րդ կիսամյակում կատարվելիք աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան Մ.Ավագյանի զեկուցումը բնագիտական ֆակուլտետի 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության մասին ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 3

2019թ. ապրիլի 13-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 22-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության հաշվետվություն:

/զեկ՝. ԲՖ դեկան Հ.Ղաջոյան/

2. ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության հաշվետվություն:

/զեկ՝. ՏՖ դեկան Ս.Ամիրխանյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ՀՄՖ դեկան Հ. Ղաջոյանի զեկուցումը հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության մասին: Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց այն բնագավառները, որոնցում իրականացվել են որոշակի գործընթացներ:Ներկայացվեցին ընդունելության հետ կապված գործընթացները, առաջադիմության ցուցանիշները, ուսպլաններում և առարկայական ծրագրերում կատարված փոփոխությունները, ուսումնական ռեսուրսները և օժանդակ ծառայությունները: Նա նշեց, որ դասավանդման ընթացքում կիրառվում են նոր ինտերակտիվ /փոխներգործուն/ մեթոդներ, որոնք նպաստում են կրթության որակի, ուսանողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, համագործակցային խմբերով աշխատելուն, ուսուցման գործընթացը հետաքրքիր ու ստեղծագործ դարձնելուն: Ըստ անհրաժեշտության՝ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ: Գնահատման տարբեր մոտեցումներ են կիրառվում. հարցում, քննարկում, բանավեճ, ռեֆերատ: Անդրադարձ կատարվեց ուսանողների հետ տարվող աշխատանքներին, մասնավորապես զեկուցողը կարևորեց ուսանողների շրջանում գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հետաքրքրությունների բացահայտումներին:

Զեկուցողը ներկայացրեց նաև 2-րդ կիսամյակում կատարելիք գործողությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Հ.Ղաջոյանի զեկուցումը հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ֆակուլտետի 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության մասին ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ՏՖ դեկան Ս.Ամիրխանյանի զեկուցումը տնտեսագիտության ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության մասին: Նա ասաց, որ իրենց նպատակը որակյալ մասնագետների պատրաստումն է: Ներկայացնելով ուսման առաջադիմության ցուցանիշներն 2018-2019 ուստարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ նա նաև նշեց, որ աշխատում են ապահովել կրթության որակի շարունակական աճ: Այնուհետև զեկուցողը ներկայացրեցրեց տվյալներ զորակոչվածների և զորացրվածների, տարկետումների, տեղափոխությունների, հեռացումների և վերականգնումների վերաբերյալ: Ֆակուլտետում անցկացվել են բազմաթիվ միջոցառումներ, կազմակերպվել են գիտաժողովներ, դասախոսություններ, քննարկումներ: Ս.Ամիրխանյանը կարևորեց այն հանգամանքը, որ ուսուցումը կազմակերպվում է միջազգային չափանիշներին համապատասխան և շուկայի հարաճուն պահանջների հաշվառմամբ, ուստի ուսպլաններում ավելացվել են նոր դասընթացներ: Ներկայացնելով 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագիրը՝ նա ասաց, որ այն համապատասխանում է ԳՊՀ ռազմավարական ծրագրի պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս.Ամիրխանյանի զեկուցումը տնտեսագիտական ֆակուլտետի 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության մասին ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 4

2019թ. մայիսի 4-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 21-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2019 ուստարվա առաջին կիսամյակի գործունեության հաշվետվություն:

/զեկ՝. ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

2. ԳՊՀ 2018- 2019 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնագիտական գործունեության հաշվետվություն:

/զեկ՝. ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը հեռակա ուսուցման ֆակուլտետի 2019 ուստարվա առաջին կիսամյակի գործունեության մասին: Նա նշեց, որ 2019 ուսումնական տարում հեռակա ուսուցման ֆակուլտետում կրթական գործընթացն իրականացվել է ըստ կրթության զարգացման պետական ծրագրի հիմնական դրույթների, բուհի զարգացման ռազմավարական ուղղությունների և ֆակուլտետի զարգացման առաջնահերթությունների: Ընդունելության գործընթացը ներկայացնելիս նշվեց, որ որոշ մասնագիտությունների նկատմամբ նվազել է հետաքրքրությունը, որի հետևանքն է ԳՊՀ-ում այդ մասնագիտությունների գծով դիմորդներ չլինելը: 1-ին կիսամյակի ընթացքում կատարվել են աշխատանքներ ուսանողներին ակադեմիական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ. կազմակերպվել են ծնողական ժողովներ, լրացուցիչ մասնագիտական և համալսարանի ընթացակարգերին վերաբերող խորհրդատվություններ, տարվել են անհատական աշխատանքներ: Նշվեց, որ ուսումնական տարին բարեհաջող սկսելու նպատակով աշխատանքներ են տարվել դեկանատների, ամբիոնների հետ, որոշվել են դասախոսների ծանրաբեռնվածությունները, պատրաստ են եղել դասացուցակները, դասերն սկսվելու վերաբերյալ ուսանողները ժամանակին ստացել են անհրաժեշտ ծանուցում: Դասերն անցել են առանց դեպքերի և լարվածության: Կազմակերպվել և անցկացվել են 1-ին կիսամյակի ստուգարքներն ու քննությունները:Ավելացել են ֆինանսական աջակցություն ստացած ուսանողների և ֆինանսավորման աղբյուրների թիվը: Զեկուցողն այնուհետև անդրադարձավ այլ բուհերից տեղափոխություններին և երկրորդ մասնագիտություն ստացողներին, համալսարանից հեռացումներին:

Ներկայացվեցին նաև ֆակուլտետի 2-րդ կիսամյակի ընթացքում կատարելիք գործողություններին :

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը հեռակա ուսուցման ֆակուլտետի 2019 ուստարվա առաջին կիսամյակի գործունեության մասին ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը 2018- 2019 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնագիտական գործունեության մասին: Զեկուցողը նշեց, որ նշված ուստարվա 1-ին կիսամյակում գրանցվել են ձեռքբերումներ ինչպես նոր գործընկերներ ունենալու, այնպես էլ կրթական և գիտական գործունեության որակի գնահատման տեսակետից: Ն.Կուտուզյանն հանգամանորեն անդրադարձավ բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, շարունակական կրթության և երկրորդ մասնագիտության կարգով ընդունելություններին, տեղափոխություններին և ակադեմիական առաջադիմության ցուցանիշներին՝ այդ ամենը ներկայացնելով համապատասխան դիագրամներով:

Համալսարանում ուշադրության կենտրոնում է եղել մասնագիտական բարձր որակներ ունեցող դասախոսներով ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը համալրելու հարցը: Կարևորվեց ասպիրանտական գիտակրթական ծրագրերի մշակման հարցը: Տարածաշրջանային բուհ լինելու հանգամանքից ելնելով՝ ասպիրանտական, մագիստրոսական և բակալավրիական կրթական ծրագրերում հետազոտության նյութ են դարձել Գեղարքունիքի մարզի զարգացման համար հեռանկարային ոլորտները: Մշակվել են մի շարք կանոնակարգեր: ԵՄ ծրագրերի շրջանակներում կազմակերպվել են սեմինարներ ու դասընթացներ:

ԳՊՀ-ում շարունակվել են գիտահետազոտական և ուսումնամեթոդական բնույթի աշխատանքների տպագրությունը, շնորհվել են դոցենտի գիտական կոչումներ: Աշխատանքներ են տարվել միջազգային ծրագրերին մասնակցելու, մարզի դպրոցների հետ համագործակցելու ուղղություններով:

Ն.Կուտուզյանը ներկայացրեց 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագիրը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը 2018- 2019 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնագիտական գործունեության մասին ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 5

2019թ. հունիսի 22-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 21-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվություն:

/զեկ՝. ԱՔՎ պետ Ա.Ղարիբյան/

2.ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների 2018-2019 ուստարվա շրջանավարտների մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության ու ամփոփիչ ատեստավորման արդյունքների ներկայացում:

/զեկ՝. դեկաններ/

3. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2018-2019 ուստարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների պաշտպանության և ամփոփիչ ատեստավորման արդյունքների ներկայացում:

/զեկ՝. ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

4. ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի բնագրերի ձևավորման և ներկայացման կարգի փոփոխությունների ներկայացում, քննարկում և հաստատում:

/զեկ՝. ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

5.ԳՊՀ- ում կայացած «Ռուսաց լեզուն որպես մշակույթների երկխոսության, գիտական համագործակցության, միջազգային և միջանձնային շփման երաշխիք 21-րդ դարում» խորագրով միջազգային գիտաժողովի նյութերը տպագրության երաշխավորելու հարցը:

/զեկ՝. օտար լեզվի և գրակ. ամբիոնի վարիչ Գ.Միրիբյան/

6.«ԵՄ ERASMUS + ABIONET. Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրին ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոսների մասնակցության հարցը:

/զեկ՝. ԲՆՖ դեկան Մ. Ավագյան/

7.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ԱՔՎ պետ Ա. Ղարիբյանի հաշվետվությունը ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության 2018-2019 ուստարվա գործունեության մասին: Նա ասաց, որ վարչությունը աշխատանքները կազմակերպել է ըստ 2018-2019 թթ. ԳՊՀ

գործողությունների պլանում նշված առաջնահերթությունների, ԳՊՀ ԱՔՎ կանոնակարգի դրույթների և ԱՔՎ 2018-2019 ուստարվա գործունեության հիմնական ուղղությունների հաշվառմամբ: Նա կարևորեց այն, որ ուստարում արդիականացվել են բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերում ներառված դասընթացներում ամրագրված կրթական վերջնարդյունքները և դրանց հասնելու համար կիրառելի ուսուցման, ուսումնառության և գնահատման մեթոդները: Թարմացվել են նաև առարկայական ծրագրերը: Այս առումով ԱՔՎ-ում վերանայվել են 520 առարկայական ծրագրերից 267-ը: Ներկայացվեցին թվական տվյալներ ըստ ամբիոնների: Այնուհետև թվարկվեցին այն աշխատանքները, որոնք կատարվել են հաշվետու տարում. ՄԿԾ-ների ուսումնական և աշխատանքային պլանների վերանայում, ուսումնական ծանրաբեռնվածությունների ստուգում, դասապրոցեսի և միջանկյալ ու ընթացիկ քննությունների անցկացման վերահսկում, լուծարային շրջանի և փոխատեղման արդյունքների թափանցիկության ապահովում, վերապատրաստման ծրագրերի իրականացում, ուսանողների ավարտական փաստաթղթերի նախապատրաստում և հաշվառում, ամենամյա վիճակագրական հաշվետվությունների ներկայացում ՀՀ ազգային վիճաժառայություն և ԿԳՆ:

Ա.Ղարիբյանը ներկայացրեց նաև ԳՊՀ ԱՔՎ 2019-2020 ուստարվա գործունեության հիմնական ուղղությունները՝ տալով համապատասխան բացատրություններ:

Հիմք ընդունելով հաշվետվությունը՝

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.ԳՊՀ ԱՔՎ պետ Ա.Ղարիբյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հավանություն տալ ԳՊՀ ԱՔՎ գործունեության հիմնական ուղղություններին:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ֆակուլտետների դեկանների զեկուցումները ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների 2018-2019 ուստարվա շրջանավարտների մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության ու ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին: Նրանք ասացին, այս ուստարին առանձնանում էր նրանով, որ վերացվեցին բոլոր բանավոր քննությունները: Բակալավրիատի ավարտական կուրսերի բոլոր ուսանողները ամփոփիչ ատեստավորման ժամանակ պաշտպանեցին ավարտական աշխատանքներ: Ամփոփիչ ատեստավորման այս ձևը տարածվեց նաև հեռակա ուսուցման համակարգի վրա: Մյուս կարևոր իրողությունն այն էր, որ որոշակի հանգամանքներից ելնելով՝ ավարտական աշխատանքների թեմաները տրվեցին ուշացումով, սակայն դա էական ազդեցություն չունեցավ ավարտական աշխատանքների կատարման որակի վրա: Զեկուցողներն այս առումով կարևորեցին ավարտական աշխատանքների ղեկավարների դերը, նրանց ակտիվ ու անմիջական աշխատանքը ուսանողների հետ: Մյուս կարևոր նորամուծությունն այն էր, որ մագիստրոսական թեզերը ենթարկվեցին արտաքին գրախոսման: Որպեսզի

տարվելիք աշխատանքներում թերացումներ չլինեին, պահպանվեց մշակված ժամանակացույց- ընթացակարգը:

Զեկուցողները հանգամանորեն ներկայացրին ամփոփիչ ատեստավորման ընթացքը, աշխատանքներին տրված գնահատականները, հանձնաժողովների աշխատանքը և արտահայտած կարծիքները ատեստավորման ընթացքի, ավարտական աշխատանքների և թեզերի վերաբերյալ: Նշվեց, որ արտահայտված տեսակետները քննարկվելու են ֆակուլտետների խորհուրդներում՝ բացթողումներն ու թերացումները վերացնելու նպատակով: Իբրև ամփոփում՝ նշեցին, որ այնուամենայնիվ, իրականացվել է բավականին արդյունավետ աշխատանք:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ Հ.Ղաջոյանի, Ս.Ամիրխանյանի, Մ.Ավագյանի և Թ.Ասոյանի զեկուցումներն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2018-2019 ուստարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների պաշտպանության և ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին: Զեկուցումը կառուցված էր շնորհանդեսի տեսքով, արդյունքները ներկայացվում էին գրաֆիկների միջոցով նախորդ ուստարվա տվյալների համեմատությամբ: Նշվեց, որ այս ուսումնական տարին առանձնահատուկ էր նրանով, որ բակալավրիատում վերացվեցին բանավոր քննությունները և ամփոփիչ ատեստավորումն անցկացվեց առկա ուսուցման համակարգում ընդունված ավարտական աշխատանքների պաշտպանության ձևաչափով: Զեկուցողն ասաց, որ կային դժվարություններ՝ կապված ժամանակային սահմանափակումների հետ, սակայն ամբիոնների և դեկանատների արդյունավետ աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ հաղթահարել դժվարությունները: Այնուհետև անդրադարձ կատարվեց ամփոփիչ ատեստավորմանը մասնակցած ուսանողների մասնակցությանը, ցուցաբերած գիտելիքներին և ստացած գնահատականներին, ավարտական աշխատանքների որակին, հանձնաժողովների աշխատանքին և արտահայտած կարծիքներին և նկատառումներին: Ն.Կուտուզյանը նշեց նաև մի շարք թերություններ՝ կապված աշխատանքների թեմաների ընտրության, բովանդակային և տեխնիկական բնութագրերի պահպանման, ղեկավարների աշխատանքի, գրախոսությունների հետ: Առաջարկվեց նկատված բացթողումները ամբիոններում և դեկանատներում քննարկել, անել համապատասխան հետևություններ, որ հետագայում բացառվեն նման թերացումները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի բնագրերի ձևավորման և ներկայացման կարգի փոփոխությունների մասին: Զեկուցողը նշեց, որ ներկա ժամանակաշրջանում գիտական պարբերականներին ներկայացվում են նոր տեխնիկական ու բովանդակային

պահանջներ՝ նպատակ ունենալով բավարարել միջազգային չափանիշները: Գավառի պետական համալսարանը մշակել է համապատասխան կանոնակարգ, որը, սակայն, փոփոխությունների և թարմացման կարիք ունի: Ն.Կուտուզյանը ներկայացրեց այն փոփոխությունները, որոնք կատարվել են կարգում: Դրանք նախապես տրամադրվել են դեկանատներին և ամբիոններին՝ կարծիքներ արտահայտելու և ներկայացնելու ակնկալիքով: Դրանք հաշվի են առնվել: Կարգի շուրջ ծավալվեց քննարկում և առաջարկվեց հաստատել կարգը փոփոխություններով:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել «Կարգ ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի բնագրերի ձևավորման և ներկայացման (փոփոխություններով)» փաստաթուղթը:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Գ.Միրիբյանի հաղորդումը ԳՊՀ- ում կայացած «Ռուսաց լեզուն որպես մշակույթների երկխոսության, գիտական համագործակցության, միջազգային և միջանձնային շփման երաշխիք 21-րդ դարում» խորագրով միջազգային գիտաժողովի նյութերը տպագրության երաշխավորելու մասին: Նա հիշեցրեց, որ նշված միջազգային գիտաժողովը անցկացվեց Գավառի պետական համալսարանում 2018 թվականին: Գիտաժողովի նյութերը հավաքված են և պատրաստ տպագրության: Առաջարկվեց Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի կողմից գիտաժողովի նյութերը երաշխավորել տպագրության:

ՈՐՈՇԵՑԻՆ.- «Ռուսաց լեզուն որպես մշակույթների երկխոսության, գիտական համագործակցության, միջազգային և միջանձնային շփման երաշխիք 21-րդ դարում» խորագրով միջազգային գիտաժողովի նյութերը երաշխավորել տպագրության:

ԼՍԵՑԻՆ.-ԲՆՖ դեկան Մ.Ավագյանի զեկուցումը «ԵՄ ERASMUS + ABIONET. Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրին ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոսների մասնակցության հարցի մասին: Զեկուցողը ասաց, որ նշված ծրագրին նվիրված վերապատրաստման հերթական աշխատաժողովին մասնակցել են ամբիոնի դասախոսներ Թերմինե Խաչիկյանը, Մարինե Հովհաննիսյանը և Կարինե Ավետիսյանը, որոնք հաշվետվություն են ներկայացրել ծրագրի շրջանակներում իրականացրած աշխատանքների մասին: Նշվեց, որ ծրագիրը հնարավորություն է տալիս ձեռք բերել լաբորատոր սարքավորումներ, որոնք կօգտագործվեն ծրագրի շրջանակներում մշակված դասընթացների լաբորատոր-գործնական աշխատանքները կատարելու նպատակով: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց 2020-21 ուստարում «Կենսաբանություն» մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրում հետևյալ դասընթացները ներառելու հիմնավորումները. «Կենսաբանության արդի հիմնախնդիրները», «Իմունոլոգիայի հատուկ դասընթաց», «Բժշկական մանրէաբանություն», «Հավելանյութերը սննդի արտադրությունում»: Զեկուցողը դիմեց

գիտխորհրդին հավանություն տալ նշված դասընթացները 2020-21 ուստարում «Կենսաբանություն» մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրում ներառելուն: Ծրագրերը կազմվում են մասնագետների կողմից:

Ելույթ ունեցան Թերմինե Խաչիկյանը, Մարինե Հովհաննիսյանը և Կարինե Ավետիսյանը, որոնք ներկայացրին մանրամասներ վերապատրաստման և աշխատաժողովի մասին:

Հիմք ընդունելով զեկուցումն ու ելույթներում արտահայտված կարծիքները՝

ՈՐՈՇԵՑԻՆ.-1.Հավանություն տալ առաջարկին և թույլատրել 2020-21 ուստարում «Կենսաբանություն» մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրում ներառել «Կենսաբանության արդի հիմնախնդիրները», «Իմունոլոգիայի հատուկ դասընթաց», «Բժշկական մանրէաբանություն», «Հավելանյութերը սննդի արտադրությունում» դասընթացները:

2.Հանձնարարել ԳՊՀ բնագիտության ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնին մշակել դասընթացների առարկայական ծրագրերը և կազմակերպել դրանց քննարկումը ամբիոնում:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 6

2019թ. հուլիսի 10-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 23-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվություն:

/զեկ՝. ՈԱԲ մասնագետ Շ Բաղդոյան/

2.ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվություն:

/զեկ՝. ՄՌԿ բաժնի վարիչ Խ.Սաֆարյան/

3.2018-2019 ուսումնական տարում ԳՊՀ բակալավրիատում և մագիստրատուրայում իրականացվելիք մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների քննարկում և հաստատում:

/զեկ՝. ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

4.ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ակադեմիական ծանրաբեռնվածության հաշվարկի նորմերի քննարկում և հաստատում:

/զեկ՝. ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

5.«ԳՊՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգի» և «ԳՊՀ –ում բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման ու գնահատման կարգի» փոփոխությունների քննարկում և հաստատում:

/զեկ՝. ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

6.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ՈԱԲ մասնագետ Շ Բաղդոյանի հաշվետվությունը ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2018-2019 ուստարվա գործունեության վերաբերյալ: Զեկուցողն ասաց, որնշված ուսումնական տարում համալսարանում իրականացվել են որակի ապահովման գործընթացներ և բարելավման աշխատանքներ, որոնք պայմանավորված են եղել ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի դրույթներով և նկատված թերությունները բացառելու անհրաժեշտությամբ: Համալսարանական գործընթացների արդյունավետության աստիճանը մշտապես որոշվել է որակի

ապահովման բաժնի կողմից անցկացված բազմակողմանի հարցումների միջոցով: Հարցումների որակական չափանիշների կատարելագործման նպատակով իրականացվել են հարցաթերթիկների լրամշակում, վերանայվել է գնահատման մեթոդաբանությունը: Հարցումներ անցկացվել են և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման համակարգերում թե՛ թղթային և թե՛ էլեկտրոնային տարբերակներով: Ուսանողների և շրջանավարտների շրջանում իրականացվել են հարցումների հետևյալ տեսակները. ստացած գիտելիքներից ուսանողների և շրջանավարտների բավարարվածության գնահատում, դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատում, դասախոսների և կրթական ծրագրերի ղեկավարների շրջանում անցկացված հարցումներ և այլն: Շնորհանդեսի միջոցով ներկայացվեցին հարցումների արդյունքներն ինչպես ըստ ֆակուլտետների, այնպես էլ ըստ համալսարանի:

Այնուհետև ներկայացվեցին այն միջոցառումները, որոնց մասնակցել են որակի ապահովման բաժնի աշխատակիցները, կամ որոնք իրականացվել են նրանց կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2018-2019 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- ՄՌԿ բաժնի վարիչ Խ.Սաֆարյանի հաշվետվությունը ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի 2018-2019 ուստարվա գործունեության վերաբերյալ: Նա ասաց, որ ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի աշխատանքները նշված ուստարում կազմակերպվել են ՀՀ օրենսդրության, ԳՊՀ կանոնադրության և ներբուհական իրավական ակտերին համապատասխան: Ներկայացնելով կատարված աշխատանքները՝ Սաֆարյանը նշեց, որ հաշվետու տարում վերանայվել են աշխատակիցների անձնական գործերը, նախապատրաստվել են կադրային, վարչական, կցագրման և այլ հրամաններ, իրականացվել են բուհ ընդունման, ազատման, տեղափոխման, հեռացման և այլ գործառույթներ: Ներկայացվեց ԳՊՀ աշխատակիցների շարժը ուսումնական տարում:

Այնուհետև անդրադարձ կատարվեց աշխատակիցների պարգևատրումներին, դեկանների, ամբիոնների վարիչների պաշտոնների թափուր տեղերի համար ըստ գործող կարգի հայտարարված մրցույթներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի 2018-2019 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը 2018-2019 ուսումնական տարում ԳՊՀ բակալավրիատում և մագիստրատուրայում իրականացվելիք մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումը պայմանավորված է նաև ռացիոնալ ուսումնական պլանների առկայությամբ. դասընթացների ընտրությունը և դասաժամերի ճիշտ բաշխումը կարևոր նախապայման է կրթության արդյունավետության բարձրացման համար: Այնուհետև նա անդրադարձավ ուսումնական պլաններին ըստ ֆակուլտետների՝ նշելով, որ համատեղ արդյունավետ աշխատանքներ են կատարվել դեկանատների հետ:

Հարցի շուրջ ծավալվեց քննարկում: Արտահայտվեցին ֆակուլտետների դեկանները և փոխդեկանները: Առաջարկվեց հաստատել բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանները 2019-2020 ուստարվա համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել 2019-2020 ուստարում բակալավրիատում և մագիստրատուրայում իրականացվելիք մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանները:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ակադեմիական ծանրաբեռնվածության հաշվարկի նորմերի մասին: Նա նշեց, որ ծանրաբեռնվածության հաշվարկի նորմերի փոփոխության կարիք կա: Խոսքը վերաբերում է անհատական, կուրսային և ավարտական աշխատանքներին, մագիստրոսական թեզերին տրվող ժամաքանակներին, քննական հանձնաժողովների նախագահների և անդամների վարձատրությանը: Ներկայացվեց պրոֆեսորադասախոսական անձնակազմի ակադեմիական ծանրաբեռնվածության հաշվարկի նորմերի սանդղակը: Առաջարկվեց հաստատել այն: Հարցի շուրջ արտահայտվեցին գիտխորհրդի անդամները:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Հաստատել ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ակադեմիական ծանրաբեռնվածության հաշվարկի նորմերը:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը «ԳՊՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգի» և «ԳՊՀ –ում բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման ու գնահատման կարգի» փոփոխությունների մասին: Զեկուցողն ասաց, որ նշված կարգերում փոփոխությունները կատարվել են անհրաժեշտաբար: Դրանք կապված են բակալավրիատում առկա և հեռակա համակարգերում բանավոր քննությունների վերացման և համատարած ավարտական աշխատանքների պաշտպանության անցման, գնահատման, գրախոսման, տեխնիկական ու բովանդակային նոր ու արդիական պահանջների կատարման հետ: Առաջարկվող փոփոխությունները ներկայացվել են ամբիոններ և դեկանատներ: Արված դիտողությունները և նկատառումներն ըստ անհրաժեշտության հաշվի են առնվել կարգերի լրամշակման ժամանակ: Առաջարկվեց հաստատել կարգերը փոփոխություններով:

ՈՐՈՇԵՑԻՆ.-1.Հաստատել «ԳՊՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ(փոփոխություններով)» փաստաթուղթը:

2. Հաստատել «ԳՊՀ–ում բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման ու գնահատման կարգ (փոփոխություններով)»:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

Արձանագրություն 7

2019թ. օգոստոսի 24-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 23-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.2019-2020 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների մասին:

/զեկ՝. Ռ.Հակոբյան/

2.2019-2020 ուսումնական տարվա աշխատանքային ուսումնական պլանների քննարկում և հաստատում՝ ըստ մասնագիտությունների:

/զեկ՝. Ն.Կուտուզյան/

3.«Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձը վճարելու և վարձն ամբողջությամբ փոխհատուցելու կանոնակարգ»-ում փոփոխությունների քննարկում և հաստատում:

/զեկ՝. Ն.Կուտուզյան/

4.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանի զեկուցումը 2019-2020 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների մասին: Զեկուցողն ասաց, որ նոր ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքները պետք է կազմակերպել նախորդ ուսումնական տարվա ավարտից անմիջապես հետո՝ տարվա ընթացքում կատարված դիտարկումների հիման վրա: Կարևոր է, որ համալսարան մտնող յուրաքանչյուր ուսանող զգա ջերմություն ու հոգատար վերաբերմունք իր նկատմամբ: Այնուամենայնիվ, առավել կարևոր է ուսումնական գործընթացի անթերի կազմակերպումը: Արդեն պետք է պատրաստ լինեն ուսումնական պլանները յուրաքանչյուր կրթական ծրագրի համար, դասացուցակները, առարկայական վերանայված և թարմացված ծրագրերը, էլեկտրոնային նյութերը՝ համալրված նորերով, անհրաժեշտ տեղեկատվական բազան: Ուսումնական գործընթացի բարեհաջող սկիզբն ու ընթացքը պետք է ապահովվեն ամբիոնների, դեկանատների,

ԱՔԲ-ի, դասախոսական կազմի և համալսարանի մյուս ստորաբաժանումների համատեղ ու միասնական համագործակցությամբ: Մեզանից յուրաքանչյուրն իր տեղում ամենայն պատասխանատվությամբ պետք է կատարի իր աշխատանքը: Նշվեց, որ աշխատանքում մանրուքներ չկան: Հատկապես պետք է ուշադրության կենտրոնում պահել 1-ին կուրսեցիներին՝ նախապես հանդիպում կազմակերպելով նրանց ծնողների հետ՝ վերջիններիս տեղեկատվություն տալով ուսանողներին և համալսարանին վերաբերող անհրաժեշտ գործընթացների մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Հանձնարարել ամբիոններին, դեկանատներին ավարտել նախապատրաստական աշխատանքները և կազմակերպված դիմավորել ուսանողներին սեպտեմբերի 1-ին:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը 2019-2020 ուստարվա ըստ մասնագիտությունների աշխատանքային ուսումնական պլանների մասին: Նա ասաց, որ ուսումնական գործընթացի հաջողությունը կախված է որակյալ աշխատանքային ուսումնական պլաններ կազմելուց: Զեկուցողը նշեց նաև, որ կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումը պայմանավորված է ռացիոնալ ուսումնական պլանների առկայությամբ. դասընթացների ընտրությունը և դասաժամերի ճիշտ բաշխումը կարևոր նախապայման է կրթության արդյունավետության բարձրացման համար: Այնուհետև նա անդրադարձավ ուսումնական պլաններին ըստ ֆակուլտետների՝ նշելով, որ համատեղ արդյունավետ աշխատանքներ են կատարվել դեկանատների հետ: Իրականացվել են հենանշային ուսումնասիրություններ, ուսումնասիրվել են այլ ուսհաստատությունների ուսումնական պլանները: ԳՊՀ աշխատանքային ուսպլանները կազմվել են ըստ այդ ուսումնասիրությունների, սակայն հաշվի են առնվել նաև ԳՊՀ առանձնահատկությունները:

Հարցի շուրջ ծավալվեց քննարկում: Արտահայտվեցին ֆակուլտետների դեկանները, փոխդեկանները, ամբիոնների վարիչները:: Առաջարկվեց հաստատել բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանները 2019-2020 ուստարվա համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել Գավառի պետական համալսարանի 2019-2020 ուսումնական տարում իրականացվելիք մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանները:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը «Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձը վճարելու և վարձն ամբողջությամբ փոխհատուցելու կանոնակարգ»-ում փոփոխություններկատարելու մասին: Զեկուցողը

նշեց, որ փաստաթուղթը նախապես հղվել է ֆակուլտետներ, որտեղ դա քննարկվել է, արվել են առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել վերջնական տարբերակը պատրաստելու համար: Նշվեց նաև, որ փաստաթղթում կատարված փոփոխությունները միտված են ուսանողների՝ ուսման վարձերի, նախատեսվող զեղչերի հետ կապված խնդիրների դյուրացմանը:

Ելույթ ունեցան դեկանները, դասախոսներ, որոնք կարևորեցին կատարված փոփոխությունները մասնավորապես ուսման վարձերի զեղչերի հետ կապված: Առաջարկվեց հաստատել կանոնակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Հաստատել «Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձը վճարելու և վարձն ամբողջությամբ փոխհատուցելու կանոնակարգ»-ը փոփոխություններով:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 8

2019թ. հոկտեմբերի 4-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 23-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2019-2020 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկ՝. ԲՖ դեկան Թ.Ասոյան/

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2019-2020 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկ՝. ԲՆՖ դեկան Մ.Ավագյան/

3.«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկում:

4.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան Թ.Ասոյանի զեկուցումը ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա գործունեության և 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգի մասին: Զեկուցողը նախ անդրադարձավ ընդունելության և ուսանողական համակազմի համալրման հարցերին: Նշվեց, որ 2018-2019 ուսումնական տարում ընդունելություն կազմակերպվել է երեք մասնագիտությունների գծով. հայոց լեզու և գրականություն, անգլերեն լեզու և գրականություն, ռուսաց լեզու և գրականություն: Հայոց լեզվի և գրականության, ռուսաց լեզվի և գրականության բաժիններում 1-ին կուրս չի ձևավորվել, իսկ անգլերեն լեզվի և գրականության բաժին ընդունվել է 10 ուսանող: Մագիստրատուրայում ևս ընդունելության քննություններ կազմակերպվել են նշված մասնագիտությունների գծով: Ուսանողական համակազմի առումով նկատելի է նվազման դինամիկա: Այսպես, եթե 2017-2018 ուստարում ֆակուլտետում սովորում էին 100 ուսանողներ (բակալավրիատ՝ 63, մագիստրատուրա՝ 37), ապա 2018-19-ում՝ 79 (բակալավրիատ՝ 53, մագիստրատուրա՝ 26): Առաջադիմությունն ըստ մագիստրատուրայի կազմել է 92,86%, ըստ ֆակուլտետի՝ 91,84%:

Այնուհետև զեկուցողն անդրադարձավ գործատուների շրջանում անցկացված հարցումներին, որոնք հիմնականում անցկացվել են դպրոցների տնօրենների,

ուսուցիչների շրջանում՝ մշակված հարցաթերթիկների միջոցով: Դրանց վերլուծությունը ցույց է տալիս, որ շրջանավարտներին տրվում են բարձր գնահատականներ նրանց մասնագիտական և ինտելեկտուալ մակարդակի համար:

Ժամանակի պահանջներին համապատասխան՝ փոփոխություններ են կրել ուսումնական պլանները: Հաշվետու ուսումնական տարում թե՛ բակալավրիատի, թե՛ մագիստրատուրայի ուսումնական պլաններում որոշ փոփոխություններ են կատարվել՝ կապված որոշ առարկաների ժամաքանակի և կիսամյակային տեղաշարժերի հետ: Իրականացվել է մասնագրերի, կրթական և առարկայական ծրագրերի շարունակական բարելավում, աշխատանքներ են տարվել բովանդակային և կառուցվածքային առումով դրանք կատարելագործելու ուղղությամբ՝ հիմք ունենալով հենանշային ուսումնասիրությունները: Մշտապես իրականացվել են կրթական ծրագրերի, դասախոսությունների, ուսանողներին տրամադրվող նյութերի թարմացում, վերանայում և արդիականացում՝ հաշվի առնելով մարդկային գործունեության բոլոր ոլորտներում և ըմբռնումներում տեղի ունեցող փոփոխությունները: Կատարվել են դասալսումներ՝ որպես դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման ազդակ, քննարկվել և արվել են հետևություններ: Կազմակերպվել են բաց դասեր և վերապատրաստման դասընթացներ: Կարևորում ենք նաև այն հանգամանքը, որ ֆակուլտետում կազմակերպված միջոցառումներին, դասընթացներին, մեթոդական քննարկումներին հաճախ մասնակցում էին տարբեր դպրոցների աշակերտներ և ուսուցիչներ: Թեմաները հիմնականում առաջարկվել և ընտրվել են դպրոցների ներկայացուցիչների կողմից:

Ֆակուլտետում աշխատանքներ են կատարվում ակտիվացնելու անմիջական շփումները ուսանողների, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ, արձագանքելու ուսանողների կողմից բարձրացված հարցերին, խնդիրներին՝ դրանց տալով անհրաժեշտ լուծումներ, քննարկել արված առաջարկությունները:

Զեկուցողը հանգամանորեն անդրադարձավ նաև ամփոփիչ ատեստավորման քննություններին, իսկ այնուհետև ներկայացրեց 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հիմք ընդունելով զեկուցումը՝ ԲՖ 2018-2019 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

2.Հաստատել ԲՖ 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան Մ.Ավագյանի զեկուցումը ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա գործունեության և 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգի մասին:

Զեկուցողը նշեց, որ ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա գործունեության հիմքում դրվել են 2017-2022թթ. ռազմավարական ծրագրի

հիմնադրույթները, ինչպես նաև ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանը: Ֆակուլտետում պարբերաբար հրավիրվել են խորհրդի նիստեր, որտեղ քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերող տարաբնույթ հարցեր, մշակվել են գործնական քայլեր համալսարանի ռազմավարական ծրագրի իրականացման ուղղությամբ:

Բնագիտական ֆակուլտետի ՄԿԾ-ներում ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներին հասնելու նպատակով կիրառվել են տարբերակված դասավանդման և ուսումնառության մեթոդներ, ներառյալ հեռավար դասընթացների անցկացումը: Միջոցներ են ձեռնարկվել կրեդիտային համակարգի բոլոր բաղադրիչների հետևողական կիրառման, ուսումնական գործընթացներում դրանց արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքները վերլուծվել են ֆակուլտետի խորհրդում, ուսանողների դժգոհությունների վերանայման ուղղությամբ կատարվել են համապատասխան աշխատանքներ:

Լաբորատոր-գործնական աշխատանքներին ներգրավված են ոչ միայն ուսանողները, այլև հանրակրթական դպրոցների աշակերտները: Մասնագիտական կողմնորոշման նպատակով ֆակուլտետի մասնագիտություններին ծանոթանալու, ինչպես նաև դիմորդներ ներգրավելու համար կազմված ժամանակացույցին համապատասխան ֆակուլտետի աշխատակիցների կողմից այցելություններ են կազմակերպվել ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցներ: Դպրոցների տնօրենների հետ համագործակցության արդյունքում հնարավոր եղավ կազմակերպել աշակերտների այցելություն Գավառի պետական համալսարան:

Այնուհետև զեկուցողը ներկայացրեց ընդունելությանը, ուսանողական համակազմին և առաջադիմությանը վերաբերող տվյալներ՝ համեմատելով նախորդ ուստարվա ցուցանիշների հետ: Մասնագիտական ամբիոնների կողմից իրականացվել են բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի վերանայում և արդիականացում, դրանց բովանդակային և կառուցվածքային բարեփոխում և բազմազանեցում ամբիոնների կողմից, ՄԿԾ-ների իրականացման արդյունքների մշտադիտարկում և դրանց շարունակական բարելավում:

Հստակեցվել են ֆակուլտետի ամբիոնների գերակա գիտական ուղղությունները:

Աշխատանքներ են տարվել ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ. կազմակերպվել են միջոցառումներ, գիտաժողովներ. Ֆակուլտետում գնահատվում են միջազգային համագործակցային կապերը:

Մ.Ավագյանը ներկայացրեց նաև 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հիմք ընդունելով զեկուցումը՝ ԲՆՖ 2018-2019 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

2.Հաստատել ԲՆՖ 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ԼՍԵՑԻՆ.- «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի աշխատանքային տարբերակի վերաբերյալ հարցը: ՀՀ օրենքի նախագծի աշխատանքային տարբերակը նախապես հղվել է շահագրգիռ կազմակերպություններին, ուսումնական և գիտական կազմակերպություններին՝ առաջարկելով դրա վերաբերյալ կարծիքներ արտահայտել: Քննարկման ընթացքում արտահայտվեցին բազմաթիվ կարծիքներ, տեսակետներ, արվեցին օգտակար դիտարկումներ: Արտահայտվեց այն ընդհանուր տեսակետը, որ օրենքի նախագիծը լուրջ շտկումների կարիք ունի:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ի մի բերել և համակարգել ԳՊՀ գիտական խորհրդի անդամների արտահայտած կարծիքները, դիտարկումները, առաջարկությունները և ընդհանուր կարծիքը ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 9

2019թ. հոկտեմբերի 12-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 23-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2019-2020 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկ՝. ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյան/

2.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2019-2020 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկ՝. ՏՖ դեկան Ս.Ամիրխանյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Հ.Ղաջոյանի զեկուցումը ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա գործունեության և 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգի մասին: Խոսելով ընդունելության մասին՝ զեկուցողը նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը (ՀՄՖ) կրթական ծրագրեր է իրականացրել բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններում հետևյալ մասնագիտություններով՝ իրավագիտություն, պատմություն, տարրական մանկավարժություն և մեթոդիկա: 2018-2019 ուսումնական տարում իրավագիտության բաժնի բակալավրիատ է ընդունվել 2 ուսանող: Իրավագիտության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրս ընդունվել է 20 ուսանող, տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժին՝ 17 ուսանող, պատմության բաժին՝ 7 ուսանող: Նշվեց նաև, որ բակալավրիատի դիմորդների թվի նվազումը

պայմանավորված է եղել ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների շրջանավարտների թվի պակասով:

Բակալավրիատում ուսման առաջադիմությունը կազմել է 86 %, մագիստրատուրայում՝ 55,5%, ֆակուլտետում՝ 70.8%: Գործատուների շրջանում անցկացված հարցումների արդյունքում պարզվել է, որ գործատուները գոհ են շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության մակարդակից, օտար լեզուների, տեղեկատվական տեխնոլոգիաների իմացությունից:

Աշխատանքներ են տարվել կրթական ծրագրերի զարգացման և փոփոխությունների ուղղությամբ: Ֆակուլտետի երեք մասնագիտությունների ուսումնական պլանները համեմատվել են հանրապետության առաջատար բուհերի՝ Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերի հետ: Նշվեցին կատարված փոփոխությունները: Հաշվետու ուսումնական տարում կատարվել է պատմության և տարրական մանկավարժության և մեթոդիկայի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների, մասնագրերի, դասընթացների ծրագրերի արտաքին փորձաքննություն: Արտաքին փորձագետների կողմից ստացվել են դրական կարծիքներ մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ:

Ֆակուլտետում կատարվել է նաև կառուցվածքային փոփոխություն. միավորվեցին պատմության և հասարակական գիտությունների ամբիոնները՝ կազմելով ընդհանուր հասարակական գիտությունների ամբիոն: Ֆակուլտետի դեկանատը և ամբիոնները համագործակցում են բուհի Որակի ապահովման բաժնի հետ: Որակի ապահովման բաժնի կողմից ուսանողների շրջանում կատարված հարցումների արդյունքները և դրանց վերլուծությունները, ինչպես նաև ֆակուլտետում իրականացված դասալսումների վերլուծության արդյունքները մշտապես քննարկվում են ֆակուլտետի խորհրդի և ամբիոնների նիստերում: Քննարկելով ուսանողների դիտողությունները և առաջարկությունները՝ դեկանատը կազմել է թերությունների շտկման և ներկայացված առաջարկությունների իրականացման գործողությունների պլան:

Հաշվետու ուսումնական տարում դպրոց–բուհ համագործակցության շրջանակներում ֆակուլտետի աշխատակիցների կողմից պարբերաբար իրականացվել են այցելություններ մարզի հանրակրթական դպրոցներ, որի հիմնական նպատակն է հանրակրթական դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը միտված միջոցառումներ, ներկայացվել են բուհում գործող մասնագիտությունները, աշխատաշուկայում տվյալ մասնագիտությամբ աշխատելու

հնարավորություններն ու հեռանկարները, ԳՊՀ ուսանողներին առաջարկվող՝ արտերկրում ուսումը շարունակելու հնարավորությունները, ուսումնասիրվել են աշակերտների նախասիրություններն ու կրթական կարիքները:

Զեկուցման ավարտին Հ.Ղաջոյանը ներկայացրեց ֆակուլտետի զարգացման հայեցակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հիմք ընդունելով զեկուցումը՝ ՀՄՖ 2018-2019 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

2.Հաստատել ՀՄՖ 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս.Ամիրխանյանի զեկուցումը ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա գործունեության և 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգի մասին: Ներկայացնելով ֆակուլտետում ընդունելության գործընթացը՝ զեկուցողը նշեց, որ 2018-2019 ուստարում տնտեսագիտական ֆակուլտետ է ընդունվել 28 դիմորդ՝ բակալավրիատում՝ 3, մագիստրատուրայում՝ 25 ուսանող: 2017-2018 ուստարում ընդունվել է 34-ը:

2018-2019 ուսումնական տարում ասպիրանտուրայի Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ ընդունվել է 2 ասպիրանտ: Հանգամանորեն ներկայացվեց ուսանողների շարժը ֆակուլտետում: 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակում ֆակուլտետի առաջադիմությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 0,3%-ով և կազմել 68,3%, իսկ հաշվետու ժամանակաշրջանի առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 9,4%-ով: Այն 11%-ով նվազել է բակալավրիատում՝ կազմելով 62,2%, իսկ մագիստրատուրայում աճել է 30%-ով: Առաջադիմության ցուցանիշները ներկայացվեցին ըստ բաժինների և կուրսերի, վիճակագրական տվյալներ՝ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ: Ուսումնական տարվա ընթացքում իրականացվում են շրջանավարտների գիտելիքներից և կարողություններից գործատուների բավարարվածության վերաբերյալ հարցումներ, որոնց արդյունքները քննարկվում են ֆակուլտետի խորհրդում, իսկ հետագա անելիքները ձևակերպվում են գործողությունների ծրագրում:

Այնուհետև նշվեց, որ ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ տարվող աշխատանքներում լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների սոցիալական կարիքների բացահայտմանը և նրանց աջակցությանը: Թարմացվել են ուսանողների էլեկտրոնային տվյալները: Իրականացվել են ներֆակուլտետային տարաբնույթ միջոցառումներ, որոնք նպաստում են ուսանողների ինտելեկտուալ, հոգևոր-մշակութային, բարոյաէթիկական զարգացմանը: Սովորողների հայրենասիրական, աշխատանքային, բնապահպանական, գեղագիտական և ֆիզիկական դաստիարակությանը մեծապես նպաստում են կազմակերպված

միջոցառումները, որոնց թիվը աճել է 10%-ով: Հաշվետու ժամանակաշրջանում լրամշակվել են ՄԿԾ-ները, որտեղ ներառվել են ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներին հասնելու համար տարբերակված դասավանդման և ուսումնառության մեթոդներ:

Տնտեսագիտական ֆակուլտետի ուշադրության կենտրոնում են դպրոցականների մասնագիտական կողմնորոշման խնդիրները, որոնք արդի ժամանակներում պահանջում է նոր մոտեցումներ:

Համալսարան-գործատու կազմակերպություն կապերը դիտվում են որպես ուսումնական և պրակտիկ գործընթացների կարևոր բաղադրիչ, որի իրականացման համար հիմք կարող է հանդիսանալ աշխատաշուկայի վերլուծությունը:

Այնուհետև անդրադարձ կատարվեց ամփոփիչ ատեստավորմանը, միջազգային ծրագրերին և պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման հարցերին:

Հանգամանորեն ներկայացվեց նաև ֆակուլտետի 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հիմք ընդունելով զեկուցումը՝ ՏՖ 2018-2019 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

2.Հաստատել ՏՖ 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 10

2019թ. նոյեմբերի 9-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 23-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ միջազգային համագործակցության ծրագրերի իրականացման ընթացքն ու արդյունքները:

/զեկ՝. Ա.Ապրոյան/

2.ԳՊՀ 2018-2019 ուսումնական տարվա տնտեսատեխնիկական գործունեության հաշվետվության և 2019-2020 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում:

/զեկ՝. Ա.Ապրոյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- Ա.Ապրոյանի զեկուցումը ԳՊՀ միջազգային համագործակցության ծրագրերի իրականացման ընթացքի ու արդյունքների մասին: Նա ներկայացրեց այն միջազգային ծրագրերը, որոնք իրականացվել են Գավառի պետական համալսարանում: Դրանք բավականին բազմազան են և կոչված են բարձրագույն կրթության բովանդակային և կառուցվածքային բարեփոխումներ կատարելուն, բուհի միջազգային կապերն ընդլայնելուն, տեխնիկական հագեցվածությունն ապահովելուն: Զեկուցողն հանգամանորեն անդրադարձավ բոլոր միջազգային ծրագրերին՝ բերելով թվական տվյալներ դրանց մասնակցած դասախոսների և ուսանողների վերաբերյալ, ինչպես նաև ներկայացվեցին այն աշխատանքները, որոնք իրականացել են այդ ծրագրերի օգնությամբ: Միջազգային ծրագրերը շարունակվում են:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Ա.Ապրոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.-Ա.Ապրոյանի զեկուցումը ԳՊՀ 2018-2019 ուսումնական տարվա տնտեսատեխնիկական գործունեության և 2019-2020 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների մասին: Նա ասաց, որ ֆինանսական խնդիրներից ելնելով՝ առավելությունը տրվել է առաջնահերթություններին: Մասամբ կամ ամբողջովին լուծվել են համակարգչային լսարաններին, լաբորատորիաներին, լսարանների կահավորմանը վերաբերող հարցերը, որոնցից շատերն էլ իրականացվել

են միջազգային ներդրումային ծրագրերի օգնությամբ: Համալսարանի տնտեսատեխնիկական անձնակազմն իրականացրել է իր գործառույթներից բխող միջոցառումներ՝ համապատասխան համալսարանի զարգացման ռազմավարական հայեցակարգի: Տնտեսատեխնիկական գործունեությունն իրականացել է տեղեկատվական տեխնոլոգիաների, տեխնիկական և անվտանգության ապահովման, տնտեսական և սպասարկման բաժինների աշխատակիցների ուժերով: Բարելավվել է համալսարանի նյութատեխնիկական բազան, ձեռք են բերվել գրենական պիտույքներ, մասնագիտական և գեղարվեստական գրականություն: Աշխատանքներ են կատարվել շենքերի ու շինությունների վերանորոգման ուղղությամբ: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Ա.Ապրոյանի հաշվետվությունը 2018-19 ուստարվա ԳՊՀ տնտեսատեխնիկական գործունեության մասին ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքը գնահատել բավարար:

2.Հավանություն տալ 2019-2020 ուստարվա ԳՊՀ տնտեսատեխնիկական զարգացման հիմնական ուղղություններին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 11

2019թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 23-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.«Շահակիցների պահանջների հաշվառմամբ ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման ընթացակարգ»ի փոփոխությունների քննարկում և հաստատում:

/զեկ՝. Ն.Կուտուզյան/

2.«Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ»-ի փոփոխությունների քննարկում և հաստատում:

/զեկ՝. Ն.Կուտուզյան/

3. Գավառի պետական համալսարանի 2020 թ. առկա և հեռակա ուսուցման ընդունելության բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի մասնագիտությունների ուսման տարեկան վարձաչափերի քննարկում և հաստատում:

/զեկ՝. Գ.Մուրադյան/

4.ԳՊՀ 2020թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծի ներկայացում:

/զեկ՝. Գ.Մուրադյան/

5.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի 2020թ. ուսումնական տարվա ուսպլանների քննարկում և հաստատում:

/զեկ՝. Ն.Կուտուզյան/

6.ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուն ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ՀՀ ԲՈԿ-ի համար ընդունելի

պարբերականների ցանկում ներառելու վերաբերյալ ԲՈԿ-ին դիմելու հարցի քննարկում:

/զեկ՝. Ն.Կուտուզյան/

7.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը «Շահակիցների պահանջների հաշվառմամբ ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման ընթացակարգ»-ում և «Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ»-ում կատարված փոփոխությունների մասին: Զեկուցողը ներկայացրեց նշված փաստաթղթերում կատարված փոփոխությունները, դրանք կատարելու պատճառներն ու նպատակը: Բոլոր դեպքերում նման նորմատիվ ակտերը ժամանակի հետ համաձայնեցնելու նպատակով պետք է ենթարկել անհրաժեշտ փոփոխությունների: Նշվեց նաև, որ նախապես այդ փաստաթղթերը դրվել են քննարկման, եղել են առաջարկություններ փոփոխությունների վերաբերյալ, որոնք անհրաժեշտության դեպքում ընդունվել են:

Առաջարկվեց հաստատել փաստաթղթերը կատարված փոփոխություններով հանդերձ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հաստատել «Շահակիցների պահանջների հաշվառմամբ ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման ընթացակարգ»-ը փոփոխություններով:

2.Հաստատել «Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ»-ը փոփոխություններով:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ.Մուրադյանի զեկուցումը Գավառի պետական համալսարանի 2020 թ. առկա և հեռակա ուսուցման ընդունելության բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի մասնագիտությունների

ուսման տարեկան վարձաչափերի մասին: Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց ԳՊՀ ֆինանսական իրավիճակը: Նա նշեց, որ Գավառի պետական համալսարանի բյուջեն հիմնականում գոյանում է ուսման վարձավճարների հավաքագրումից, սակայն համալսարանը, հաշվի առնելով մարզում առկա սոցիալական անբարենպաստ իրավիճակը, սահմանել է ՀՀ-ում ուսման ցածր վարձաչափեր, որը երբեմն հանգեցնում է ֆինանսական լարվածության, որովհետև դժվար է նման վարձաչափերով իրականացնել ժամանակին համապատասխան կրթական գործընթաց: Ելնելով անհրաժեշտությունից և կատարված վերլուծությունից՝ զեկուցողն առաջարկեց որոշ մասնագիտությունների գծով ուսման վարձաչափերը ավելացնել 10000-ական դրամով:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Հիմք ընդունելով կատարված վերլուծությունները, զեկուցման մեջ բերված փաստերը՝ Գավառի պետական համալսարանի 2020 թ. առկա և հեռակա ուսուցման ընդունելության բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի մասնագիտությունների ուսման տարեկան վարձաչափերը ավելացնել 10000-ական դրամով:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ.Մուրադյանի զեկուցումը ԳՊՀ 2020թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծի մասին: Զեկուցողը ներկայացրեց ԳՊՀ ֆինանսական վիճակը՝ կատարելով համապատասխան վերլուծություններ: Նշվեց, որ 2019թ. բյուջեն իրացվել է այնպես, ինչպես նախատեսվել էր: Կա նաև ֆինանսական միջոցների որոշակի խնայողություն: 2020 թ. բյուջեի նախագիծը կազմելիս հաշվի են առնվել մուտքերի և ելքերի համամասնությունները: Նշվեց, որ բյուջեի մեծ մասը կազմում է աշխատավարձի ֆոնդը: Բյուջեի մնացած հատվածները կազմվել են խիստ խնայողաբար, առաջին պլան են մղվել առաջին անհրաժեշտության հանգամանքները:

Հարցի մասին ելույթ ունեցավ ԳՊՀ ռեկտոր Հ.Հակոբյանը: Նա նշեց, որ ցածր վարձաչափերը, որոնցից գոյանում է բյուջեն, հնարավորություն չեն տալիս ֆինանսական առումով լուրջ բարեփոխումներ իրականացնել թե՛ նյութատեխնիկական բազայի հարստացման, թե՛ կրթական գործընթացը

համակողմանիորեն ու խորը կազմակերպելու առումներով, սակայն եղած միջոցներն օգտագործվում են խիստ նպատակային և ուղղորդված:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հավանություն տալ ԳՊՀ 2020թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծին:

2. ԳՊՀ 2020թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագիծը ներկայացնել ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդ՝ հաստատման:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի, 2020թ. ուսումնական տարվա ուսպլանների մասին: Զեկուցողը նախ կարևորեց հեռակա ուսուցման համակարգի առկայությունը ԳՊՀ-ում, ապա այդ համակարգի նկատմամբ դրսևորվող ուշադրությունը: Այս համակարգի առանձնահատկությունն այն է, որ կրթական գործընթացը համալսարանում ունի ժամանակային խիստ սահմանափակություն, իսկ դա նշանակում է, որ խիստ կարևոր է դառնում ինքնուրույն աշխատանքը համալսարանից դուրս: Հասկանալի է, որ այսպիսի իրավիճակում պետք է հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլաններին, դրանցում ներառված դասընթացներին և սրանց առարկայական ծրագրերին: Զեկուցողը նշեց, որ 2020 ուստարվա ուսումնական պլանների կազմման ուղղությամբ ամբիոններում կատարվել է ջանադիր աշխատանք, որին մասնակից է դարձել նաև պրոֆեսորադասախոսական կազմը: Կազմակերպվել են քննարկումներ, որոնց ընթացքում կատարվել են ճշգրտումներ և բերվել են վերջնական տեսքի: Զեկուցողն առաջարկեց հաստատել ուսպլանները:

Հարցի շուրջ ելույթ ունեցան ֆակուլտետների դեկանները, ամբիոնների վարիչները:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Հաստատել ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի 2020թ. ուսումնական տարվա ուսպլանները:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուն ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ՀՀ ԲՈԿ-ի համար ընդունելի պարբերականների

ցանկում ներառելու վերաբերյալ ԲՈԿ-ին դիմելու հարցի մասին: Զեկուցողը նշեց, որ ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուն միշտ էլ գտնվել է ՀՀ ԲՈԿ-ի /նախկինում՝ ԲՈՀ/ համար ընդունելի պարբերականների ցանկում, սակայն վերջին 1-2 տարում այն դուրս է մնացել նշված ցանկից, ընդ որում առանց մեկնաբանության և հիմնավորման: Համալսարանի հարցմանն այդ կառույցի կողմից ստացվել է անորոշ պատասխան: Գիտական հոդվածների ժողովածուն ունի բարձր գիտական արժեք, այն ամփոփում է տարվա ընթացքում համալսարանի աշխատակիցների, պրոֆեսորադասախոսական կազմի կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքները, որոնք շոշափում են գիտության տարբեր ոլորտներում առկա հարցադրումներն ու խնդիրները: Ըստ զեկուցողի՝ տեղի է ունեցել թյուրիմացությունը, որը շուտափույթ պետք է շտկել: Այդ նպատակով զեկուցողն առաջարկեց նամակով դիմել ԲՈԿ-ի ղեկավարությանը՝ պարզաբանումներ ստանալու և ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուն ԲՈԿ-ի համար ընդունելի պարբերականների ցանկում ընդգրկելու խնդրանքով՝ միաժամանակ կատարելով ԲՈԿ-ի առաջադրած պահանջները: Ներկայացվեց ԲՈԿ ուղարկվելիք նամակը:

Հարցի մասին ելույթ ունեցավ ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա նշեց, որ Գավառի պետական համալսարանի համար դա կարևոր խնդիր է, քանի որ նաև դրանով է արժևորվում համալսարանի ծավալած գործունեությունը:

Արտահայտվեցին ֆակուլտետների դեկանները, ամբիոնների վարիչները, դասախոսներ:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Դիմել ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեին ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուն ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ՀՀ ԲՈԿ-ի համար ընդունելի պարբերականների ցանկում ներառելու խնդրանքով:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան